ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-21-2/5-3

ք. Երևան 10.09.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 891 060 (հինգ միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար վաթսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը. եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Սպորտ Սիթի» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Սեբաստիա 85
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570003992020100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02590297
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-2/5-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	Մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1(2)	Tenth PAK	Tenth0521	Tenth	Tenth	Արհեստական կաշվից, ֆուտզալի համար նախատեսված, N 4 չափի (62-64սմ շրջանագիծ)՝ քաշը 400-440 գրամ, թելակար՝ 32 պանել: 2 մ բարձրությունից ազատ անկումից հատակից հետ ցատկի բարձրությունը 50-65սմ, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), մրցումային (խաղային) որակի FIFA-ի կողմից հաստատված որակի FIFA Quality Pro կամ FIFA Quality կամ IMS նշանով: «Տենտ» հանրահայտ ապրանքանիշի: Մատակարարվում են չփչված վիճակում: Փչելուց հետո գնդակի ներսում մթնոլորտային ճնշումը պետք է ապահովի 0.6-0.8 մթն.-ի (0.6-0.8 կգ/սմ2): Մատակարարումից մեկ ամսվա ընթացքում անորակ գնդակները հետ են վերադարձվում մատակարարին՝ նորով փոխարինելու համար: Փաթեթավորումը պոլիեթիլենային տոպրակների կամ ստվարաթղթե արկղերի մեջ:
2(3)	MITRE	MITRE	MITRE0706	MITRE	Արհեստական պոլիուրեթանային (PU) կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-445 գրամ: Նախատեսված խոտածածկի և մեծահասակների մարզումների համար: Մոդելը նախատեսված 2019/2020թ և ավելի բարձր մրցաշրջանների համար: Ձեռքի կամ մեքենայի կար՝ լամինացված նեյլոնային թելով: 32 պանել 2 մ բարձրությունից ազատ անկումից հատակից հետ ցատկի բարձրությունը 110-155սմ, ռետինե միջուկով (կամեռով): Միջուկը պաշտպանված առանձին կտորե պարկով: Մատակարարվում են չփչված վիճակում: Փչելուց հետո գնդակի ներսում մթնոլորտային ճնշումը պետք է ապահովի 0.6-1.1 մթն.-ի (0.6-1.1 կգ/սմ2): Մատակարարումից մեկ ամսվա ընթացքում անորակ գնդակները հետ է վերադարձվում մատակարարին՝ նորով փոխարինելու համար: Փաթեթավորումը պոլիեթիլենային տոպրակների կամ ստվարաթղթե արկղերի մեջ:
3(7)					Նարնջագույն կամ սպիտակ, ABS պլաստիկ նյութից, 40մմ տրամագծով, քաշը 2,7գ: «40+» նշումով:
4(10)					Գործարանային արտադրության: Իրանը պլաստմասե կամ մետաղական: Ժապավենը մետաղական կամ բարձրորակ ապակեպլաստե, երկարությունը՝ 50մ, լայնությունը՝ 12.5-13.5մմ, հաստությունը 0.22-1 մմ, երկկողմանի տպագրված, ժապավենը փաթաթելու համար նախատեսված պտուտակային բռնակով:
5(12)					Կազմված է ցանցից և մետաղական կագնակներից, սինթետիկ թելի բազմաշերտ գործվածքով, ցանցի լայնությունը 14.5-15 սմ, երկարությունը 160-180 սմ սեղանին ձգելու զսպանակային սեղմակի մեխանիզմով, սեղմակի բերանին ռետինե ծածկույթով: Փաթեթավորումը ստվարաթղթե տուփի մեջ:
6(14)	MOLTEN	MOLTEN	MOLTEN JL7X	MOLTEN	Մրցման համար նախատեսված, բնական կաշվե, Մոլթեն հանրահայտ ապրանքանիշի N7 չափի (76-79սմ), GG7 ստանդարտի, քաշը 567-650 գր: 2 մ բարձրությունից ազատ անկումից հատակից հետ ցատկի բարձրությունը 120-140 սմ: Մատակարարվում են չփչված վիճակում: Մատակարարումից մեկ ամսվա ընթացքում անորակ գնդակները հետ է վերադարձվում մատակարարին՝ նորով փոխարինելու համար: Փաթեթավորումը պոլիեթիլենային տոպրակների մեջ:
7(15)	MIKASA	MIKASA	MIKASA MA	MIKASA	Միկասա հանրահայտ ապրանքանիշի, 5 համարի, հաստատված, որպես պաշտոնական գնդակ FIVB 8 պանել, պանելները սոսնձված, սինթետիկ կաշի, կամեռը բութիլե՝ պատված նայլոնե շերտով, DIMPLE տեխնոլոգիայով (2մմ տրամագծով և 0.2-.03մմ խորությամբ փոսիկներով): Միջազգային բարձրակարգ առաջնությունների համար նախատեսված:

8(19)					270-300սմ երկարության լարով: Լարը մետաղական՝ պատված սինթետիկ էլաստիկ նյութով: Լարը բռնակներին ամրացվում է առանցքակալների (подшипник) միջոցով: Բռնակները կապույտ կանաչ կամ սև, պլաստմասե՝ լցոնված (ոչ փուչ), պատված նեոպրոնով: Քաշը առնվազն 200 գրամ: Փաթեթավորումը պոլիեթիլենային կամ ստվարաթղթե արկղերի մեջ:
9(29)					Մարզական գլխարկ մուգ կապույտ գույնի (բեյսբոլի), Առնվազն 200 գրամ մակերեսային խտությամբ բամբակե գործվածք, կոշտ հովարով, երկաթե սեղմակով չափը փոխելու հնարավորությամբ: 6 պանել, 4-6 հատ ասեղնագործած եզրով օդափոխության անցքերով (լյուվերսներով), Հովարը սենդվիչ տիպի՝ դիմային եզրի կենտրոնում սպիտակ գծով, գլխարկի դիմային մասի կենտրոնում, 3d ասեղնագործած Armenian army տարբերանշան՝ 6x8 սմ չափի: Գլխարկի պիտակի վրա նշվում են «Արտադրված է ՀՀ ՊՆ պատվերով» գրառումը: Արտադրող երկրի նշում առկա է միայն, եթե այն արտադրվել է Հայաստանում, այլ պարագայում արտադրող երկիրը չի նշվում:
10(32)					Բանակային ձեռնամարտի սաղավարտ երկաթյա դիմակով՝ մրցումային որակի: Արտաքին ծածկույթը պատրաստված է բարձրորակ արհեստական կաշվից, ներքին ծածկույթը պատրաստված է արհեստական թավշյա կտորից (զամշից), որը ապահովում է սաղավարտի ամուր ֆիքսումը և թույլ չի տալիս սաղավարտի շարժումը գլխի վրա, սաղավարտի դիմակը իրենից ներկայացնում է միաձուլված ճաղավանդակ պողպատյա լարից, լարի տրամագիծը պետք է լինի 4,0 և եզրերում 5,5 միլիմետր: Չապսերը՝ 14 հատ L (7 կարմիր, 7 կապույտ), 6 հատ M (3 կարմիր, 3 կապույտ): Յուրաքանչյուրը փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակով:
11(33)					Բանակային ձեռնամարտի ոտքերի պաշտպանիչ սրունկի և ոտնաթաթի համար՝ մրցումային որակի: Պատրաստված է էլաստիկ կտորից, գուլպայաձև: Պաշտպանիչ ներդիրի շերտը կազմված է պենոպոլիէթիլենից, 15 միլիմետր ընդանուր հաստությամբ, քաշը 200-ից 300 գրամ, չափսերը՝ 14 զույգ L (7 կապույտ, 7 կարմիր), 6 զույգ M (3 կապույտ, 3 կարմիր): Փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակով:
12(35)					Մարզակոշիկներ (զույգ) բաղկացած է միաձույլ խորդուբորդ ռետինե տակացուից և սև կամ մուգ կապույտ գույնի կաշվից, լեզվակը՝ արհեստական կաշվից: Արտաքին տեսքը համաձայն հավելված 9-ի: Տակացուն միանում է երեսացուին վուլկանացման եղանակով: Երեսացուի վրա քուղերի անցկացման համար նախատեսված են 6 զույգ անցքեր: Քուղերի երկարությունը 100-110 սմ: Տակացույի հաստությունը թաթամասում առնվազն 2,5 մմ-ից և ավարտվում է կրունկամասում 35 մմ: Դիմային վերին մասում օդափոխության անցքերով: Մարզակոշիկի ներսի ներդիրը /ստելկա/ 2-3 մմ: 5 հատ՝ 37, 5 հատ՝ 38, 15 հատ՝ 39, 25 հատ՝ 40, 45 հատ՝ 41, 45 հատ 42, 35 հատ՝ 43, 15 հատ՝ 44, 10 հատ՝ 45 չափսերի: Չափսերի ստանդարտը համաձայն կից ներկայացված սպորտային կոշկեղեն կաշվե կոշիկների չափսերի սանդղակի հավելված 10: Յուրաքանչյուր զույգը փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակով, իսկ յուրաքանչյուր 10 զույգը՝ ստվարաթղթե արկղերի մեջ՝ արկղերի վրա նշված լինեն քանակը և չափսերը:
13(40)					Ռետինե մակետ «Մակարով» ատրճանակի չափերով (թույլատրվող շեղում +/- 5մմ), քաշը մոտեցված ատրճանակի քաշին: Մատակարարումից առաջ մատակարարը նմուշը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ: Փաթեթավորումը՝ յուրաքանչյուր 20 հատը ստվարաթղթե արկղով:

Ծանոթություն:

- Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվում է մատակարարի միջոցներով ք. Երևան, Թևոսյան 14 հասցեով, կենտրոնական գույքի պահեստ:

Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավել պայմանագրով սահմանված ժամկետներից:

-Մասնակցի կողմից ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը պարտադիր է 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, չափաբաժինների համար: Պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի երաշխիքային նամակի համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը պարտադիր չէ, իսկ համապատասխանության և որակի սերտիֆիկատների ներկայացումը պարտադիր է 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների համար:

-Տեխնիկական բնութագրերում ապրանքների 2 տարբեր տեսակի մատակարարման հնարավորության դեպքում (օր՝. 1-ին չափաբաժնի դեպքում ռետինե կամ լատեքսե միջուկով) ապրանքի ողջ խմբաքանակը պետք է մատակարարվի միևնույն տեսակի՝ (օր՝. 1-ին չափաբաժնի դեպքում պետք է մատակարարվի 550 հատ լատեքսե միջուկով, կամ 550 հատ ռետինե միջուկով):

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, ընդ որում՝
						3-րդ եռամսյակ
1(2)	ֆուտբոլի գնդակներ Գնդակ ֆուտզալի	հատ	20	6800	136000	20
2(3)	ֆուտբոլի գնդակներ Գնդակ ֆուտբոլի մարզումային	հատ	200	5100	1020000	200
3(7)	սեղանի թենիսի գնդակներ Սեղանի թենիսի գնդակներ	հատ	1000	82	82000	1000
4(10)	չափիչ քանոն, շինարարական Չափման մետր ժապավենով	հատ	10	4300	43000	10
5(12)	գործված ցանցեր Սեղանի թենիսի ցանց	հատ	21	3100	65100	21
6(14)	բասկետբոլի գնդակներ Պրոֆեսիոնալ բասկետբոլի գնդակ	հատ	10	19000	190000	10
7(15)	վոլեյբոլի գնդակներ Պրոֆեսիոնալ վոլեյբոլի գնդակ	հատ	15	28000	420000	15
8(19)	ցատկապարան Ցատկապարան պրոֆեսիոնալ	հատ	201	1960	393960	201
9(29)	սպորտային հագուստ Ամառային մարզական գլխարկ	հատ	200	1550	310000	200
10(32)	սաղավարտներ Բանակային ձեռնամարտի սաղավարտ	հատ	20	31000	620000	20
11(33)	սրունքի պաշտպանիչ Բանակային ձեռնամարտի ոտքի պաշտպանիչ հանդերձանք	զույգ	20	6550	131000	20
12(35)	մարզական կոշիկներ Սպորտային կոշկեղեն կաշվե	զույգ	200	10500	2100000	200
13(40)	խալաթիք վենք Ռետինե ատրճանակ	հատ	200	1900	380000	200

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սպորտ Սիթի» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-2/5-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(2)	ֆուտբոլի գնդակներ Գնդակ ֆուտզալի	37451290/2	136000	136000
2(3)	ֆուտբոլի գնդակներ Գնդակ ֆուտբոլի մարզումային	37451290/3	1020000	1020000
3(7)	սեղանի թենիսի գնդակներ Սեղանի թենիսի գնդակներ	37461170/1	82000	82000
4(10)	չափիչ քանոն, շինարարական Չափման մետր ժապավենով	44192900/1	43000	43000
5(12)	գործված ցանցեր Սեղանի թենիսի ցանց	39541160/2	65100	65100
6(14)	բասկետբոլի գնդակներ Պրոֆեսիոնալ բասկետբոլի գնդակ	37451410/1	190000	190000
7(15)	վոլեյբոլի գնդակներ Պրոֆեսիոնալ վոլեյբոլի գնդակ	37451580/3	420000	420000
8(19)	ցատկապարան Ցատկապարան պրոֆեսիոնալ	37431210/1	393960	393960
9(29)	սպորտային հագուստ Ամառային մարզական գլխարկ	18411200/1	310000	310000
10(32)	սաղավարտներ Բանակային ձեռնամարտի սաղավարտ	18441210/1	620000	620000
11(33)	սրունքի պաշտպանիչ Բանակային ձեռնամարտի ոտքի պաշտպանիչ հանդերձանք	37451810/1	131000	131000
12(35)	մարզական կոշիկներ Սպորտային կոշկեղեն կաշվե	18821300/2	2100000	2100000
13(40)	խաղալիք զենք Ռետինե ատրճանակ	37521280/1	380000	380000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սպորտ Սիթի» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-2/5-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-2/5-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն